

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 20-06-2024 թ. որոշմամբ
 «ԲՀՀ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ»
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ԲՀՀ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ»	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ փ.Լյուքսեմբուրգի 2.7 բն.19	
1.3 Պետական գրանցման համարը	211.060.04204	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2006-10-13	
1.5 ՀՎՀՀ-ն	00861992	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)95190212	
	+(374)60546156	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.wwf.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	nmirakyan@wwfcaucasus.org	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Կարեն Մանվելյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	15	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար	158,476,980

	Հարավային Կովկասում Էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն տարածաշրջանային ծրագիր	108,522,842
	Ընձառյուծի պահպանությունը հարավային Կովկասում	63,185,758
	Հայաստանում Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիր	12,246,040
	Գրասենյակի և անձնակազմի պահպանման ծախսեր	65,851,474
	Կազմակերպության զարգացման և եկամուտների հավաքագրման ծրագիր	17,268,361
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Հանգանակություն, Հայաստանում Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիր	2,558,776
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվություններ/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Samsung Gear VR վիրտուալ իրականության ակնոց 2 հատ	35,425
	Lenovo Պլանշետ 5 հատ	399,500
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ընձառյուծի պահպանությունը հարավային Կովկասում	32,448,528	
Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար	245,095,172	
Հարավային Կովկասում Էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն տարածաշրջանային ծրագիր ECF	135,606,375	
Հայաստանում Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիր	25,354,058	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	557,207,774	
13. Կանոնադրական նպատակների իրականացման ուղղված ծախսերի չափը	438,504,133	

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն
իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 30 էջերից:
Էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

*<<ԲՀՀ-ԲՆՈւԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՍՆԱՃՅՈւՂ>>-ի*

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական եզրակացություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԵՐԵՎԱՆ

Հունիս 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՆԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն	Էջ 3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9



«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 49/3, 7-րդ հարկ
E-mail: info@ifp.am
Հեռ. +(374) 11 96 77 77

“IFP” LLC
49/3 Komitas St., 7th floor., Yerevan, RA
E-mail: info@ifp.am
Tel. +(374) 11 96 77 77

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ԲՀՀ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ»-ի
ղեկավարությանը

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «ԲՀՀ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ»-ի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն առ 2023թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից գերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԲՀՀ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽՄԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՂ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2023 հազ. դրամ	31.12.2022 հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	36,995	20,193
Ոչ նյութական ակտիվներ	4.1	10,244	12,025
		47,239	32,218
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	1,677	6,964
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	6	155,350	129,635
Բանկային ավանդներ	7	86,707	127,502
Դրամական միջոցներ	8	145,820	231,290
		389,554	495,391
Ընդամենը ակտիվներ		436,793	527,609
ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կուտակված հավելուրդ/պակասորդ		(587)	(25,321)
		(587)	(25,321)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	47,239	32,218
		47,239	32,218
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	368,619	510,201
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	20,901	10,480
Շահութահարկի գծով պարտավորություն	15.1	621	31
		437,380	552,930
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		436,793	527,609

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 6 - 30) հաստատվել են դեկավարության կողմից 28.06.2024թ., ստորագրությամբ

Կարեն Մանվելյան
Տնօրեն




Նարինե Միրաքյան
Ֆինանսավարչական բաժնի ղեկավար



ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՉԲԱՇԽՎԱԾ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻՒ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԲՀՀ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՂ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար


	Ծնթ.	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Շնորհներից եկամուտ	12	596,933	465,463
Վարչական ծախսեր	13	(118,702)	(117,387)
Այլ եկամուտներ		9,758	6,323
Ծրագրային և այլ ծախսեր	14	(438,505)	(256,144)
Այլ ծախսեր		(28,858)	(21,803)
Գործառնական շահույթ (վնաս)		20,626	76,452
Ֆինանսական եկամուտ (ծախս)		3,177	765
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ		1,833	
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից գուտ օգուտ (կորուստ)		-	(81,787)
Շահույթ/վնաս մինչև հարկումը		25,636	(4,570)
Շահութահարկի գծով ծախս	15	(902)	(543)
Տարվա գուտ շահույթ (վնաս)		24,734	(5,113)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		24,734	(5,113)
Կուտակված հավելուրդ (պակասորդ) տարեսկզբին		(25,321)	(20,208)
Կուտակված հավելուրդ (պակասորդ) տարեվերջին		(587)	(25,321)

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 6 - 30) հաստատվել են ղեկավարության կողմից 28.06.2024թ., ստորագրությամբ

Կարեն Մանվելյան
Տնօրեն




Նարինե Միրաքյան
Ֆինանսավարչական բաժնի ղեկավար



ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԲՀՀ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՂ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ. հազար դրամ	2022թ. հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր դրամաշնորհներից	428,110	566,868
Այլ մուտքեր	490	4,598
Վճարումներ գնումների և ծառայությունների դիմաց	(103,655)	(64,744)
Ենթադրամաշնորհների տրամադրում	(284,847)	(258,416)
Շահութահարկի վճարում	(312)	(1,506)
Վճարումներ բյուջե	(874)	(317)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(167,380)	(140,416)
Այլ ելքեր	(7,335)	(4,140)
	(135,803)	101,927
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների օտարումից ստացված մուտքեր	1,833	3,586
Հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց վճարումներ	(24,729)	(4,158)
Բանկային տոկոսների ստացում	649	-
Բանկային ավանդներ ներգրավում/մարում	47,992	70,353
	25,745	69,781
Դրամական միջոցների զուտ հոսք	(110,058)	171,708
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն	24,588	(42,817)
Տարեսկզբի դրությամբ դրամական միջոցներ	231,290	102,399
Տարեվերջի դրությամբ դրամական միջոցներ	145,820	231,290

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկություններ

«ԲՀՀ-ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ»-ը (այսուհետև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2006թ-ին: Հիմնադրամի կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2006թ. հոկտեմբերի 13-ին, գրանցման համարը՝ 211.060.04204, վկայական՝ 01Բ 002094:

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0090, Լյուքսեմբուրգի 2.7 բն.19: Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00861992:

Մասնաճյուղը Հիմնադրամի գտնվելու վայրից դուրս՝ Հայաստանի Հանրապետությունում տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը չունի իրավաբանական անձի կարգավիճակ, գործում է Հիմնադրամի անունից և սույն կանոնադրության հիման վրա, կարող է իրականացնել Հիմնադրամի ինչպես բոլոր գործառույթները, այնպես էլ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթը:

Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրամի կանոնադրությամբ, ինչպես նաև Հիմնադրամի իրավասու մարմինների որոշումներով:

Մասնաճյուղի լրիվ անվանումն է՝

հայերեն լեզվով՝

ԲՀՀ- Բնության Համաշխարային Հիմնադրամի Հայաստանյան Մասնաճյուղ

անգլերեն լեզվով՝

WWF- World Wide Fund for Nature Armenian Branch

Հիմնադրամի խնդիրներն են՝

- բնության պահպանության համար ֆինանսական միջոցների հավաքագրումը, տնօրինումը և տեղաբաշխումը,
- բնության պահպանության արդիականության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության խթանումը,
- բնության պահպանությանը ուղղված միջոցառումների և ծրագրերի ֆինանսավորումը,
- բնության պահպանության համար բարոյական և ֆինանսական աջակցությունը:

Հայաստանի գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին

հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերը ներքաշվել են սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը բիզնես միջավայրում:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Նոր կամ փոփոխված ՖՀՄՄ-ներ

Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր. պայմանագրի կատարման արժեքը, Հղում հայեցակարգային հիմունքներին. ՀՀՄՄ 16-ի, ՀՀՄՄ 37-ի և ՖՀՄՄ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՖՀՄՄ 1-ին, ՖՀՄՄ 9-ին, ՖՀՄՄ 16-ին և ՀՀՄՄ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՖՀՄՄ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՄ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում: Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար Կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՄ 2-ը: Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՄ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը *ստուգում է ակտիվի պատշաճ գործունակությունը՝ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական բնութագրերը գնահատելու միջոցով:* Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները: Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել ղեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև ղեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:

ՀՀՄՄ 37-ի փոփոխությունը հստակեցնում է *պայմանագրի կատարման գծով ծախսեր* հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը: Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին

պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հատկացված ակտիվների գծով:

ՖՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՖՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ.-ի Ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՖՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՖՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքների փոխարեն պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՖՀՄՄԽ (IFRIC) 21-ին: Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37-ի: Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմնավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:

ՖՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% թեստի կազմում»՝ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հոգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխությունը համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% թեստի կազմում»:

Փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալվող գույքի բարելավումների հաշվարկման հնարավոր անորոշությունից խուսափելու համար:

ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՖՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվները և պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեին մայր կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլինեին ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը: ՖՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՖՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՖՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուստր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՖՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:

Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական

հոսքերը: Այս փոփոխության նպատակն է՝ ապահովել համապատասխանություն հարկումից հետո զեղչված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

ՖՀՄՍ 16-ի «COVID-19-ի հետ կապված վարձավճարների արտոնությունների փոփոխություն» (թողարկված է 2020 թ. մայիսի 28-ին և ուժի մեջ է մտնում 2020թ. հունիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունը վարձակալներին տրամադրում է ընտրություն ցանկության դեպքում ազատվել գնահատելու գործընթացից, թե արդյոք COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնությունն իրենից ներկայացնում է վարձակալության ձևափոխություն: Վարձակալները կարող են ընտրել վարձակալության արտոնությունների համար նույն հաշվառումը, կարծես դրանք վարձակալության փոփոխություններ չլինեին: Գործնական նպատակահարմարությունը վերաբերում է միայն այն վարձակալական արտոնություններին, որոնք տեղի են ունենում որպես COVID-19 համավարակի անմիջական հետևանք և միայն այն դեպքում, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները. վարձակալության վճարների փոփոխությունը հանգեցնում է վարձակալության վերանայված հատուցման, որը էապես նույնն է, կամ պակաս է, քան վարձակալության հատուցումը անմիջապես փոփոխությունից առաջ, վարձակալության վճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021 թվականի հունիսի 30-ին կամ դրանից առաջ մարվող վճարումների վրա. և վարձակալության այլ պայմանների բովանդակային փոփոխություն տեղի չի ունեցել: 2021 թվականի մարտի 31-ին, շարունակվող համավարակի պայմաններում, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակեց լրացուցիչ փոփոխություն՝ զիջումների ժամկետը երկարաձգելով 2021 թվականի հունիսի 30-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը (ուժի մեջ է 2021 թվականի ապրիլի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

Հետևյալ ստանդարտների փոփոխություններն ուժի մեջ են մտել 2021թ. հունվարի 1-ից, բայց որևէ էական ազդեցություն չունեն Հիմնադրամի վրա:

Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Թողարկվել են նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք պարտադիր են 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և որոնք Հիմնադրամն ավելի վաղ չի ընդունել:

ՖՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրեր (թողարկված է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ 17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը, ինչը դժվարացնում էր մնացած առումներով համանման ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների համեմատությունը և համադրությունը ներդրողների համար: ՖՀՄՍ 17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումն իրականացնելու համար:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի

դրույթները հստակեցնելու նպատակով: Այս փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 17 -ի ութ ոլորտներին և չեն փոխում ստանդարտի հիմնարար սկզբունքները:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև. ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի փոփոխություններ (հրապարակվել է 2014թ. սեպտեմբերի 11-ին և ուժի մեջ մտնելը հետաձգված է անորոշ ժամկետով): Այս փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև առկա հակասություններին, որոնք վերաբերում են ակտիվների վաճառքին կամ ներդրմանը՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև: Փոփոխությունների հիմնական հետևանքն է, որ ամբողջական շահույթը կամ վնասը ճանաչվում է, երբ գործարքը ներառում է ձեռնարկատիրական գործունեություն: Մասնակի շահույթը կամ վնասը ճանաչվում է, երբ գործարքը ներառում է ակտիվներ, որոնք ձեռնարկատիրական գործունեության մաս չեն կազմում, նույնիսկ եթե այդ ակտիվները պահվում են դուստր ձեռնարկությունների կողմից:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը - ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Կիրառման սահմանափակ շրջանակ ունեցող այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Մարումը հետաձգելու իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը ժամանակաշրջանի վերջում բավարարում է բոլոր կիրառելի պայմանները:

Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Մինևս ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ - Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (թողարկված են 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է ընկերությունները տարբերեն հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններից:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ - Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (թողարկված են 2021թ. փետրվարին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխության նպատակն է մեծացնել ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների աստիճանը: Փոփոխության համաձայն՝ կազմակերպությունները պետք է համակարգված և կառուցվածքային կերպով բացահայտեն իրենց հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունը, մասնավորապես՝

- կազմակերպության կողմից օգտագործված հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրությունը, որը առնչվում է ֆինանսական հաշվետվությունների հասկանալիությանը,
- հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ, ղեկավարության կողմից կայացված այն դատողությունների մասին տեղեկատվություն, որն ամենաէական ազդեցություն ունի ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա,
- հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի էական ճշգրտումներ զգալի ռիսկ առաջացնող, ղեկավարության կողմից արված ենթադրությունների մասին տեղեկություններ,
- ժամանակաշրջանի ընթացքում հաշվապահական հաշվառման քաղաքականության ցանկացած փոփոխության և ֆինանսական հաշվետվությունների վրա այդ փոփոխությունների ազդեցության մասին տեղեկատվություն. և
- փոխադարձ հղումներ ֆինանսական հաշվետվություններում այլ բացահայտումներին, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Մեկ գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր – ՀՀՄՍ 12-ի փոփոխություններ (տրամադրվել է 2021թ. մայիսի 7-ին և ուժի մեջ է 2023 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները սահմանում են, թե ինչպես հաշվառել հետաձգված հարկն այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապատեղակայման և քանդման պարտավորությունները: Փոփոխությունները պահանջում են, որ ընկերությունները ճանաչեն հետաձգված հարկն այն գործարքների նկատմամբ, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ առաջացնում են հավասար չափով հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Վարձակալության պարտավորություն վաճառք հետադարձ վարձակալության գործարքում ՖՀՄՄ 16-ի փոփոխություններ (հրապարակվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է 2024 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունը պարզաբանում է, որ երբ վաճառող-վարձակալը լիզինգային գործարքը հաշվառում է որպես վաճառք և վարձակալություն, վաճառող-վարձակալը պետք է ճանաչի վարձակալության պարտավորությունը այնքանով, որքանով լիզինգը վարձակալություն է: Եթե վարձակալության վերադարձը վարձակալություն չէ, ապա վաճառող-վարձակալը պետք է ճանաչի ստացված ցանկացած հատուցում որպես եկամուտ:

Փոփոխությունը նաև պահանջում է, որ վաճառող-վարձակալը որոշի այն ակտիվի հաշվեկշռային արժեքը, որը ենթակա է վարձակալության՝ բաշխելով ակտիվի և վարձակալության պարտավորության միջև գործարքից ստացված հասույթը՝ ելնելով գործարքի ամսաթվի դրությամբ դրանց համապատասխան իրական արժեքներից: Փոփոխությունն ուղեցույց է տալիս ակտիվի և վարձակալության պարտավորության համապատասխան իրական արժեքները որոշելու վերաբերյալ:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

Կովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ ՀՀՄՄ 1-ի փոփոխություններ (հրապարակվել է 2022թ. հոկտեմբերի 31-ին և ուժի մեջ է 2024 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխություններն ուղեցույց են տալիս այն մասին, թե ինչպես դասակարգել ոչ ընթացիկ պարտավորությունները, որոնց կովենանտները խախտված են՝ որպես ընթացիկ թե ոչ ընթացիկ: Մասնավորապես, փոփոխությունները պահանջում են, որ կազմակերպությունը գնահատի, արդյոք կովենանտի խախտումը վերացվել կամ չեղարկվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Եթե խախտումը վերացվել է կամ հանվել է հաշվետու ամսաթվի դրությամբ, պարտավորությունը պետք է դասակարգվի որպես ոչ ընթացիկ: Եթե խախտումը չվերացվի կամ չեղարկվի հաշվետու ամսաթվի դրությամբ, պարտավորությունը պետք է դասակարգվի որպես ընթացիկ:

Փոփոխությունները նաև պահանջում են, որ կազմակերպությունը բացահայտի կովենանտի խախտման բնույթն ու չափը, ինչպես նաև ցանկացած այլ գործոն, որը հաշվի է առնվել պարտավորությունը դասակարգելիս:

Ակնկալվում է, որ ստանդարտը որևէ էական ազդեցություն չի ունենա Հիմնադրամի վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

3.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՄ-ներ): ՖՀՄՄ-ները Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Ստանդարտները և Մեկնաբանություններն են, որոնք կազմված են.

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից,
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից,
- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) մեկնաբանություններից, և
- Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) մեկնաբանություններից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.2 Անընդհատության հիմունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

3.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

3.4 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Այն հանդիսանում է նաև Հիմնադրամի այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

3.5 Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքներում:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- դեբիտորական պարտքեր,
- կրեդիտորական պարտքեր,
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չեն նախորոշվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները կազմված են դրամարկղի դրամական միջոցներից, բանկում պահվող դրամական միջոցներից և ճանապարհին դրամական միջոցներից:

3.6.1 Ճանաչումը և սկզբնական չափումը

Ֆինանսական գործիքները ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքները չափվում են փոխհատուցման իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Կարճաժամկետ (մինչև վեց ամիս մարման ժամկետ ունեցող) դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հավասար է համապատասխան գործարքի գնին, այսինքն՝ դեբիտորական (կրեդիտորական) պարտքի դիմաց ստացման (վճարման) ենթակա դրամական միջոցների անվանական գումարին, եթե գեղչման ազդեցությունը էական չէ:

3.6.2 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո դեբիտորական և կրեդիտորական պարտքերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեքկումից կորուստները:

3.6.3 Ֆինանսական գործիքների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվը (դեբիտորական պարտքերը) ապաճանաչվում է (դուրս է գրվում հաշվեկշռից) այն և միայն այն դեպքում, երբ.

ա) լրանում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ պահանջելու ժամկետը, կամ

բ) Հիմնադրամը փոխանցում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ ստանալու պայմանագրային իրավունքը՝ առանց պահպանելու ակտիվի նկատմամբ վերահսկողությունը կամ ակտիվի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական պարտավորությունը (կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները) դուրս է գրվում հաշվեկշռից այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության ժամկետը):

3.7 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեքկումից կուտակված կորուստները:

Հիմնական միջոցի միավորի վրա կատարված հետագա ծախսումներն ավելացվում են հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտներն ավելի շատ կհոսեն դեպի Հիմնադրամ, քան ակընկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից: Մյուս բոլոր դեպքերում ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

Հիմնական միջոցների միավորի մաշեցվող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների համար ընտրվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները.

Կառուցվածքներ	20 տարի
Մեքենա-սարքավորումներ	5 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Արտադրատնտեսական գույք	5 տարի
Այլ հիմնական միջոցներ	5 տարի

Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ այն իր ներկա վիճակով պատրաստ է օգտագործման համար (անկախ փաստացի օգտագործվելու հանգամանքից) և այլևս չի դադարեցվում, մինչև տվյալ հիմնական միջոցի ապաճանաչումը կամ «որպես վաճառքի համար պահվող» դասակարգումը՝ «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ին համապատասխան:

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեքկումից կորուստները: Ձեռք բերված համակարգչային

ծրագրերի լիցենզիաները կապիտալացվում են հիմք ընդունելով համապատասխան ծրագրի ձեռքբերման և գործարկման համար կատարված ծախսումները: Ոչ նյութական ակտիվների գծով հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ ավելացնում են այն ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Համակարգչային ծրագրերի մշակման կամ սպասարկման հետ կապված ծախսումները ճանաչվում են որպես կրած ծախսեր: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում գծային մեթոդով ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները կազմում են 10 տարի:

3.8 Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման գույք արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄՄԵ (առաջինը մուտք, առաջինը ելք) արժեքի բանաձևով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Ծրագրերի իրականացման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծրագիրը, որի իրականացման նպատակով դրանք ձեռք են բերվել, դեռ շարունակվում է և պաշարները ենթակա են օգտագործման:

3.9 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որը ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

- ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Հիմնադրամը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և
- բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.10 Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, երբ կա հիմնավորված երաշխիք, որ.

- ա) Հիմնադրամը կատարելու է շնորհներին հարակից պայմանները, և
- բ) շնորհները ստացվելու են:

Պետական շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները.

- որոշակի ծախսերի համար տրված շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն ժամանակաշրջանում, որում ճանաչվում են այդ համապատասխան ծախսերը;
- մաշվող (ամորտիզացվող) ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանների ընթացքում և այն համամասնություններով, որոնք համապատասխանում են այդ ակտիվների մաշվածության ծախսերի ճանաչմանը:

Ոչ պետական կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից ստացված շնորհների հաշվառման համար անալոգիայով կիրառվում է ՀՀՄՍ 20 Պետական շնորհներ ստանդարտի մոտեցումները:

3.11 Հասույթ

3.11.1 Ապրանքներ

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Հիմնադրամը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը.

բ) Հիմնադրամը չի պահպանում՝

- կառավարման այն չափով մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից,

- վաճառված ապրանքների նկատմամբ վերահսկողություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն:

3.11.2 Ծառայություններ

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Հիմնադրամը գործարքից հասույթը ճանաչում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն:

Հասույթը, որի համար հաշիվ չի ներկայացվել, ներառվում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում որպես՝ «Հաճախորդին մատուցվող ծառայության դիմաց չներկայացված հաշիվներ»: Հաշվում ներառված գումարները, որոնք գերազանցում են որպես հասույթ ճանաչված գումարները, հաշվառվում են «Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր» հոդվածում:

3.11.3 Տոկոսներ

Տոկոսները եկամուտ են ճանաչվում կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը:

3.12 Շահութահարկ

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկերն առաջանում են այնպիսի գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում է սեփական կապիտալում: Նման դեպքերում ընթացիկ և հետաձգված հարկերը ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում:

3.12.1 Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակրնկալվում է, որ կվճարվի

բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

3.13 Փոփոխություններ հաշվապահական գնահատումներում, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

3.13.1 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվում է, երբ պահանջվում է ՖՀՄՄ-ներով, կամ եթե այդ փոփոխությունը նպաստում է տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ չեն համարվում.

ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը տնտեսական գործունեության այսպիսի դեպքերի և գործարքների համար, որոնք իրենց բովանդակությամբ տարբերվում են նախորդ տնտեսական գործունեության դեպքերից և գործարքներից,

բ) նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը՝ տնտեսական գործունեության դեպքերի և գործարքների համար, որոնք առաջ տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը, որը կատարվում է նոր հաշվապահական հաշվառման ստանդարտի ընդունման հետ կապված, կատարվում է ըստ անցումային դրույթների, եթե այդպիսիք կան տվյալ հաշվապահական հաշվառման ստանդարտում: Անցումային դրույթների բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, քանի դեռ դա իրագործելի է: Յուրաքանչյուր առաջացող ճշգրտում հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում ներկայացվում է որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

4. Հիմնական միջոցներ

	Կառուցվածքներ հազ. դրամ	Մեքենաներ և սարքավորում հազ. դրամ	Տրանսպորտային միջոցներ հազ. դրամ	Արտադր տնտեսակ գույք հազ. դրամ
Սկզբնական արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	2,195	29,405	49,496	11,4
Ավելացումներ	-	2,580	684	4
Նվազեցումներ	-	(89)	(8,280)	(3)
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	2,195	31,896	41,900	11,7
Ավելացումներ	-	1,289	22,111	4
Նվազեցումներ	-	-	(11,360)	
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	2,195	33,185	52,651	12,2
Կուտակված մաշվածություն				
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	220	24,531	28,092	10,5
Ավելացումներ	110	2,634	2,312	5
Նվազեցումներ	-	(89)	(8)	(3)
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	330	27,076	30,396	11,0
Ավելացումներ	110	2,242	4,781	4
Նվազեցումներ	-	-	(11,360)	
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	440	29,318	23,817	11,4
Զուտ հաշվեկշռային արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	1,975	4,874	21,404	9
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	1,865	4,820	11,504	7
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	1,755	3,867	28,834	7

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական և
դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 60,214 հազ. դրամ):

4.1 Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական/վերագնահատված արժեք		
Առ 1 հունվարի 2022թ.	18,460	18,460
Ավելացումներ	-	-
Նվազեցումներ	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	18,460	18,460
Ավելացումներ	-	-
Նվազեցումներ	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	18,460	18,460
Կուտակված մաշվածություն		
Առ 1 հունվարի 2022թ.	4,654	4,654
Ավելացումներ	1,781	1,781
Նվազեցումներ	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	6,435	6,435
Ավելացումներ	1,781	1,781
Նվազեցումներ	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	8,216	8,216
Ընթացիկ արժեք		
Առ 1 հունվարի 2022թ.	13,806	13,806
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	12,025	12,025
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	10,244	10,244

Ոչ նյութական ակտիվների մեջ ներառված են Համակարգչային ծրագրեր՝ 650 հազ. դրամ սկզբնական արժեքով և Կենդանիների տեղաշարժի մոնիթորինգի հավելված՝ 17,812 հազ. դրամ սկզբնական արժեքով:
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի լրիվ մաշված Ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը կազմել է 650 հազ. դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 650 հազ. դրամ):

5. Պաշարներ

	31.12.2023թ. հազ.դրամ	31.12.2022թ. հազ.դրամ
Ապրանքներ պահեստում	1,198	5,667
Վառելիք	479	208
Այլ նյութեր	-	1,089
	1,677	6,964

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	<u>31.12.2023թ. հազ.դրամ</u>	<u>31.12.2022թ. հազ.դրամ</u>
Կանխավճարներ ծրագրերի/ենթադրամաշնորհների գծով	153,735	129,305
Կանխավճարներ աշխատակիցներին	-	20
Կանխավճարներ հարկերի գծով	1,615	310
	<u>155,350</u>	<u>129,635</u>

7. Բանկային ավանդներ ՀՀ առևտրային բանկերում

	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Ավանդներ	Եվրո	2024	2,0	86,707	78,347
Ավանդներ	Եվրո	2023	1,5	-	48,506
Ավանդներ	Եվրո	2022	2.1	-	649
				<u>86,707</u>	<u>127,502</u>

8. Դրամական միջոցներ

	<u>31.12.2023թ. հազ.դրամ</u>	<u>31.12.2022թ. հազ.դրամ</u>
Բանկային հաշիվներ –Արտարժույթով	136,908	226,872
Բանկային հաշիվներ -ՀՀ դրամով	8,826	4,340
Դրամարկղում -ՀՀ դրամով	86	78
	<u>145,820</u>	<u>231,290</u>

Ստորև ներկայացված աղյուսակները դրամական միջոցների և դրանց համարժեք մնացորդների պարտքային որակն է՝ հիմնված պարտքային ռիսկի աստիճանների վրա, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	Արժույթ	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Moody's-ի վարկանիշ՝ A+	ՀՀ դրամ	4,205	4,100
Moody's-ի վարկանիշ՝ A+	ԱՄՆ դոլար	1,271	1,848
Moody's-ի վարկանիշ՝ A+	Եվրո	9,400	12,296
Moody's-ի վարկանիշ՝ A+	Շվեյցարական ֆրանկ	109,893	188,779
		124,769	207,024
«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ	Արժույթ	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Fitch-ի վարկանիշ՝ BB-	ՀՀ դրամ	4,621	240
Fitch-ի վարկանիշ՝ BB-	ԱՄՆ դոլար	10	-
Fitch-ի վարկանիշ՝ BB-	Եվրո	16,334	23,948
		20,965	24,188

9. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	31.12.2023թ. հազ.դրամ	31.12.2022թ. հազ.դրամ
Մնացորդը տարեսկզբին	32,218	36,126
Վերադասակարգում	24,729	3,586
Շնորհից եկամտի ճանաչում (ա)	(9,708)	(7,494)
Մնացորդը տարեվերջին (զ)	47,239	32,218

ա) Շնորհից եկամտի ճանաչում

	31.12.2023թ. հազ.դրամ	31.12.2022թ. հազ.դրամ
Հիմնական միջոցների մաշվածության չափով	7,927	5,713
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի չափով	1,781	1,781
	9,708	7,494

10. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	31.12.2023թ. հազ.դրամ	31.12.2022թ. հազ.դրամ
Մնացորդը տարեսկզբին	510,201	410,287
Ստացված դրամաշնորհներ (ա)	428,556	570,454
Շնորհի վերադասակարգում	(24,729)	(3,586)
Շնորհից եկամտի ճանաչում	(587,225)	(457,969)
Փոխարժեքային տարբերություն	41,815	(8,985)
Մնացորդը տարեվերջին	368,619	510,201

ա) Ստացված դրամաշնորհներ

	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
ԲՀՀ Շվեյցարիա (WWF Switzerland)	158,477	430,502
Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (BMZ) KFW Ջարգացման Բանկի միջոցով	108,523	55,424
ԲՀՀ Գերմանիա (WWF Germany)	80,454	61,580
ԲՀՀ Գերմանիա / ԲՀՀ Ինթերնեյշլ	77,597	22,871
KPMG	500	-
Այլ	3,005	77
	428,556	570,454

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2023թ. հազ.դրամ	31.12.2022թ. հազ.դրամ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	1,023	560
Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի և վճարների գծով	459	144
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	19,419	9,776
	20,901	10,480

12. Շնորհից եկամուտ

	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Եկամուտներին վերաբերող շնորհներից	587,225	457,969
Ակտիվներին վերաբերող շնորհներից	9,708	7,494
	596,933	465,463

13. Վարչական ծախսեր

	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Անձնակազմի գծով ծախսեր	63,146	77,496
Հասարակայնության հետ կապերի և միջոցների ներգրավման ծախսեր	31,800	11,642
Տարածքի վարձակալություն	8,978	12,765
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	5,050	1,067
Տրանսպորտային միջոցների ծախսեր	4,498	4,840
Հեռահաղորդակցության ծախսեր	1,041	1,517
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,781	3,574
Այլ մասնագիտական ծառայություններ	-	1,676
Աուդիտի և խորհրդատվության ծախսեր	1,945	1,870
Աշխատակիցների վերապատրաստում	463	261
Այլ ծախսեր	-	679
	118,702	117,387

14. Ծրագրային և այլ ծախսեր

	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Անձնակազմի գծով ծախսեր	90,346	62,920
Ենթադրամաշնորհներ	209,791	137,650
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	4,795	14,172
Ծրագրային և մասնագիտական ծախսեր	115,034	16,222
Մաշվածություն և ամորտիզացիա	9,708	7,494
Աուդիտի և խորհրդատվության ծախսեր	855	1,127
Տրանսպորտային միջոցների ծախսեր	2,405	2,959
Տարածքի վարձակալություն	4,124	2,181
Հեռահաղորդակցության ծախսեր	169	291
Միջոցների ներգրավման ծախսեր	1,298	7,334
Այլ ծախսեր	-	3,794
	438,505	256,144

15. Շահութահարկի գծով ծախս

	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	902	543
	902	543

Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքով՝ շահութահարկի դրույքաչափը 2023թ-ին սահմանված է 18% (2022թ. -ին՝ 18%)

15.1 Ընթացիկ հարկի գծով պարտավորություն

	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Տարեսկզբի մնացորդը	31	994
Տարվա ծախս	902	543
Վճարում	(312)	(1,506)
Տարեվերջի մնացորդը	621	31

16 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Հիմնադրամի առանցքային անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Գործարքներ	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Աշխատավարձ և այլ հատուցումներ	24,002	22,269
	24,002	22,269

17. Ֆինանսական ռիսկեր

Բնականոն գործունեության ընթացքում Հիմնադրամը հակված է ֆինանսական տարբեր ռիսկերի՝ շուկայական ռիսկի (ներառյալ՝ արժույթային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի, այլ գնային ռիսկի) և պարտքային ռիսկի: Հիմնադրամը չի կիրառում ածանցյալ գործիքներ՝ հեջավորելու նշված ռիսկերը:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, կազդեն Հիմնադրամի շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

Արժույթային ռիսկ

Արժույթային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժույթային ռիսկին Հիմնադրամի հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված դրամական միջոցների հետ: Արժույթային ռիսկը հիմնականում կապված է Եվրոյով, ԱՄՆ Դոլարով և Շվեյցարական ֆրանկով արտահայտված դրամական մնացորդների հետ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն իր արտարժույթային հաշիվներում ուներ Եվրոյով արտահայտված 25,734 հազար դրամի, ԱՄՆ Դոլարով արտահայտված 1,281 հազար դրամի և Շվեյցարական ֆրանկով արտահայտված 109,893 հազար դրամի անկանխիկ միջոցներ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Եվրոյի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ կազմել է 447.9, ԱՄՆ Դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ կազմել է 404.79, իսկ Շվեյցարական ֆրանկի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ կազմել է 483.45

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը չունի ֆինանսական գործիքներ, որոնք հակված են տոկոսադրույքային ռիսկի:

Այլ գնային ռիսկ

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժույթային ռիսկից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց հաշվեկշռային արժեքից:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, երբ գործընկերների կողմից Հիմնադրամի նկատմամբ իրենց պարտավորությունների չկատարելու արդյունքում, Հիմնադրամը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Պարտքային ռիսկը առաջանում է բանկային մնացորդներից:

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամը խոշոր ձեռքբերումների գծով մատակարարներից պահանջել և ստացել է բանկային երաշխիք: Տրված կանխավճարների գծով կիրառում է տրամադրման սահմանաչափեր և հետագա վճարումները իրականացվում են արդեն իսկ տրամադրված գումարների համար ներկայացված հաշվետվությունները ընդունելուց հետո:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Հիմնադրամը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Հիմնադրամը պատրաստում է դրամական հոսքերի տարեկան նախահաշիվներ: Հիմնադրամի դրամական հոսքերի կանխատեսումների մեջ ներառվում են շնորհատուից ստացվելիք շնորհները և այլ հատկացումներ:

Հիմնադրամը չունի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ:

18. Պայմանական դեպքեր

Ապահովագրություն

Հիմնադրամը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով՝ մարդկանց առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով առաջացած վնասների և աշխատակիցների առողջության ապահովագրության: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ մարդկանց առողջության հասցված վնասը, որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Պայմանական պարտավորություններ

2023թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս հաշվետվության հաստատման ամսաթիվը Հիմնադրամի կողմից և Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան: